ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 57

«23» 10 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 43 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Երևան քաղաքի դատախազության դատախազի 1 հաստիքը կրճատելու և Երևան քաղաքի դատախազի տեղակալի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 13-ի N 37 ու հուլիսի 31-ի N 68 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 43 հրամանով հաստատված 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 15-րդ գլխի 53-րդ կետի «Դատախազի տեղակալ 3» բառերը փոխարինել «Դատախազի տեղակալ 4», իսկ նույն գլխի 55-րդ կետի «Դատախազության դատախազ 8» բառերը՝ «Դատախազության դատախազ 7» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ